

ԴԱՍ 1.11. Արևմտյան Եվրոպա: Կազմը, աշխարհագրական դիրքը: Բնական պայմանները ու ռեսուրսները, բնակչությունը

• • •

Արևմտյան Եվրոպան խտաբնակ տարածաշրջան է, դրա համար էլ գերակշռում են մարդածին լանդշաֆտները: Դա է պատճառը, որ բնապահպանական հիմնախնդիրները պետությունների առջև ավելի սուր են դրված:

• • •

Արևմտյան Եվրոպայի ժողովուրդները քրիստոնեության կաթոլիկական, բողոքական և ուղղափառ ուղղության հետևորդներ են: Տարածաշրջանի բնակչության ազգային և կրոնական կազմի վրա շատ մեծ է ներգաղթի ազդեցությունը: Ներգաղթողների մեջ շատ են մահմեդականները, որի հետևանքով սրվել են միջկրոնական հարաբերությունները: *Արևմտյան Եվրոպան վերածվել է աշխարհումի ներգաղթի համաշխարհային գլխավոր օջախի:*

Արևմտյան Եվրոպայի բնակչության ընդհանուր թվի նվազման հետ մեկտեղ աճում է տարեցների տեսակարար կշիռը, այսինքն տեղի է ունենում բնակչության աստիճանական «ծերացում»:

• • •

Նրանք մեծ հաջողությունների են հասել տարբեր գիտությունների, գյուտերի ու հայտնագործությունների բնագավառում: **Ավադրիայում** է իր գիտական գործունեություն ծավալել գերմանացի աստղագետ Կեպլերը, ով հայտնագործել է մոլորակների շարժման օրենքները: Ֆիզիկոս Հեյզը հայտնաբերել է տիեզերական ճառագայթները, Պորշեն ստեղծել է էլեկտրամոբիլը, բնագետ Մենդելը ժառանգականության տեսության հիմնադիրն է:

Բելգիայի առևտրի և ծովագնացության խոշոր կենտրոն Անտվերպենը դարձավ եվրոպական քարտեզագրության կենտրոնը: Աստղագետ Լեմետրը

մշակեց «ընդարձակվող Տիեզերքի» մոդելներից մեկը, Ֆրիզը ստեղծեց վայրի աշխարհագրական երկայնությունը որոշելու մեթոդը, Գրամմը պատրաստեց առաջին դինամոմեքենան, Ստեխը համարվում է հիդրոստատիկայի հիմնադիրը:

Նիդեռլանդները հռչակված է գյուտերով ու հայտնագործություններով. մեխանիկ, ֆիզիկոս և մաթեմատիկոս Ք. Հյուգենսը լույսի ալիքային տեսության հիմնադիրն է, տվել է շրջանագծի, էլիպսի, հիպերբոլի աղեղների երկարության և տրամագծի հարաբերության որոշման՝ P 3.14 թվի հաշվման տեսությունը, պատրաստել է առաջին ճոճանակավոր ժամացույցը, պարզել է Սատուրնի շուրջ գոյություն ունեցող օղակը, հայտնագործել է նրա Տիտան արբանյակը: Այս երկրում են հայտնագործել դիտափողը, մանրադիտակը: Բնագետ Լևենհուկը գիտական միկրոսկոպիայի ստեղծողն է, Ռոզեբոմը՝ ֆիզիկական քիմիայի հիմնադիրն է, Էյնդհովենը՝ էլեկտրաստագրության, Էյկմանը ստացավ վիտամինները: Չորս ֆիզիկոս գյուտերի և հայտնագործությունների համար ստացել է Նոբելյան մրցանակ: Մեծ է նրանց ներդրումը աշխարհագրության և քարտեզագրության բնագավառում: Հայտնի են Վ. Բարենցի, Վ. Յանսզոնի, Ա. Թասմանի նավարկությունները:

Արևմտյան Եվրոպայի երկրներն ունեն զարգացած գրականություն: Ավստրիայում մեծ հաջողության հասան Ֆրանց Վերֆելը («Մուսա լեռան քառասուն օրը» վեպով, եթե վեպը չես կարդացել, կարդա), Ս. Յվայգը, Բելգիայում աչքի ընկավ սիմվոլիզմի հայր Մ. Մետերլինկը, որին բարձր են գնահատել Հովի. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը: Արևմտաեվրոպական ճարտարապետությունը զարգացել է ռոմանական, գոթական, բարոկկո և մոդեռն ոճերով;

Գեղանկարչության մեջ համաշխարհային ճանաչում ունեն Պ. Ռուբենսի (Բելգիա), Ռեմբրանդտի, Վան Գոգի (Նիդեռլանդներ) կտավները: Վիեննական դասական դպրոցի ներկայացուցիչներ էին հռչակավոր կոմպոզիտորներ Յո. Հայդնը, Վ. Մոցարտը, Լ. Բեթհովենը, Յո. Բրամսը: Ավստրիան վալսի հայրենիքն է՝ Յոհան Շտրաուս հայր, Յոհան Շտրաուս որդի:

• • •

ՏԱՌ ընդհանուր առմամբ բարենպաստ է: Այն պայմանավորված է հավաք տարածքով, լայն ձակատով դեպի Ատլանտյան օվկիանոսի ծովեր և ծոցեր ունեցած ելքով (բացառությամբ Շվեյցարիայի, Ավստրիայի, Լյուքսեմբուրգի, Լիխտենշտեյնի): Նավարկելի խոշոր գետերի ուղղությունն այնպիսին է, որ տարածաշրջանի ներքին մասերը կապում է Համաշխարհային օվկիանոսի հետ: Նրա տարածքով են անցնում Հյուսիսային, Արևելյան և Հարավային Եվրոպաները կապող կարևոր ճանապարհները:

• • •

Բարձրադիր շրջանը Ալպերի լեռնային գոտին է, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես ջրաէներգետիկ և ռեկրեացիոն ռեսուրսների, այնպես էլ՝ լեռնագնացության, լեռնադահուկային մարզաձևերի առումով: Հյուսիսային ծովի ափին (Նիդեռլանդներ) ծովի մակարդակից ցածր տեղամասեր կան, որոնց անվանում են **մարշեր**, իսկ դրանց չորացված, մշակված տեղամասերը կոչվում են **պոլդերներ**:

• • •

Արևմտյան Եվրոպան հարուստ չէ *հանքային ռեսուրսներով*, և այդ հիմնախնդիրը շարունակ սրվում է: Համեմատաբար շատ են քարածխի պաշարները, նշանավոր է **Ռուրի** հանքավայրը Գերմանիայում: Գազի զգալի պաշարներ կան Նիդեռլանդներում (**Սլոխտերեն**), երկաթի հանքաքարի՝ Ֆրանսիայում (**Լոթարինգիա**), քիչ չափով նաև Լյուքսեմբուրգում: Ալյումինի հումքի՝ բոքսիտների, ինչպես նաև ուրանի հանքաքարի պաշարներով առանձնանում է Ֆրանսիան, գրաֆիտով՝ Ավստրիան:

• • •

Բոլոր երկրները զարգացման հետադյունաբերական փուլում են՝ աչքի ընկնելով նյութական արտադրության, գիտության, կրթության և մշակույթի զարգացման բարձր մակարդակով: Տարածաշրջանն ունի նաև քաղաքական մեծ դերակատարում: Ֆրանսիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Շվեյցարիայում են գտնվում ՄԱԿ-ին, ԵՄ-ին առընթեր միջազգային բազմաթիվ կազմակերպությունների նստավայրերը և շտաբ-բնակարանները: «Շենգեն վիզա» գործառույթն էլ իրականացնում է Լյուքսեմբուրգում գտնվող **Շենգեն** բնակավայրը:

• • •

Բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս աճեցնել բարեխառն և մերձարևադարձային գոտիների գյուղատնտեսական մշակաբույսեր՝ հյուսիսում՝ ցորեն, գարի, կարտոֆիլ, հարավում՝ ձիթապտուղ, ցիտրուսներ, խաղող:

• • •

Բնակչությունը: Ֆրանսիան Եվրոպայի առաջին երկիրն է, որ սկսեց վարել ծնելիությունը խրախուսող ժողովրդագրական քաղաքականություն: Արևմտյան Եվրոպայի բնակչության բնական աճի տեմպերը շատ ցածր են, իսկ առանձին երկրներում բնական աճ չկա և բնակչության թվաքանակը պակասում է:

• • •

Ֆրանսիան ունի տեղաբնիկ ազգային փոքրամասնություններ: Բելգիան երկազգ երկիր է, որտեղ ապրում են վալոններ և ֆլամանդացիներ: Վալոնները ֆրանսախոս են, ֆլամանդացիներն էլ խոսում են իրենց լեզվով՝ ֆլամանդերեն: Շվեյցարիայում տարբեր լեզուներով (գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն) խոսող ժողովուրդների համալսմբման շնորհիվ ավարտվել է միասնական ազգի ձևավորման գործընթացը: